

ՄՈՒՐՋԸ ԻՔՐ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՕՐԳԱՆ

ԿՐ)

ԳՐԱԿԱՆ ՅԱՌԱՋԻԹՈՒԹԻՒՆԸ 90-ԿԱՆ ԹԻԱԿԱՆՆԵՐԻՆ

Այս ամսագիրը հիմնելիս՝ մենք նպատակ էինք դրել ժամանակակից հայկական միտքը առաջնորանել, և այդ կէտնպատակին աջն ծառայեցնելու ջանադիր ենք եղած սկզբից մինչև այսօր։ Որպէս զի թերթը կարելի լինէր այդպիսի նպատակի ծառայեցնել, պէտք էր մի կողմից արդարեւ, միւս կողմից՝ մաքառել։ Արդարեւ թերթը պիտի երևար թերթի տւածի մէջ, որին պիտի միանար համակրութիւնը դէպի նոյն նպատակին ծառայողները, մաքառումը՝ հակակրանք յայտնելու մէջ դէպի ամենը, ինչ խոչընդոտ պիտի հանդիսանար առաջադրած նպատակին։ Դորանով պիտի որոշէր և ամսագրի բնաւորութիւնը—գործող և մարտնչող։

Այս ամսագիրը չէր խոստանում հետևող լինել գոյութիւն ունեցող որ և է կուսակցութեան, որովհետև որքան և հիանալի ջանքեր լինին արւած անցեալում՝ մեզնում մտաւորական կեանք ստեղծելու համար, բայց և այնպէս դեռ շատ քիչ բան է արւած—գործով և գրականութեամբ,—որպէս զի մի մեծ հասարակութիւն մեզնում մտածում և գործում լինի որոշ սկզբունքների համաձայն, անունդ և կրթութիւն առնելով արդէն ունեցած մամուլից ու գրականութիւնից։ Ուր չկայ մի մեծ այդպիսի հասարակութիւն, այնտեղ չի կարող նաեւ առաջադար մտքի մի օրգան յենել առձեռն եղած հասարակութեան վրայ, հետևող լինել նորան, տարւել նորանով, շեղափարւել նորա ճաշակով։

Ընդհակառակը, մի այդպիսի հասարակութեան մէջ յառաջա-

1) Համեմատել Մուրճ 1889, № 1 և 4, 1897 № 1, 1898 № 11-12.

տար մտքի օրգանը ինքը պիտի սթափեցնող ոյժ հանդիսանայ, ինքը պիտի պահանջներ արթնացնի ընթերցող հասարակութան մէջ, ինքը պիտի գրդիւ լինի, նա պիտի ձգտի բարձրացնել մտաւոր պահանջը, նրբացնել ճաշակը, նոյն իսկ իր վրայ ռիսկ վերցնելով՝ իսկոյն հասկացւած չլինելու ընդհանրութիւնից, բայց հաստատ համոզումով որ վաղը այդ նոյնը լինելու է ամբողջ հասարակութեան պահանջը, նորա սեփականութիւնը:

Ոչինչ չկայ աւելի հեշտ բացատրելի քան թէ այն, որ մի այդպիսի ժամանակ մեզնում կարողանում է գործել նաև մի այլ մամուլ, որի Դերը կայանում է ցինիկաբար ուրանալու, ժխտելու, հերքելու մէջ՝ պայմանով որ վաղը նոյն այդ մամուլը կրկնի այն ինչ երևի ուրանում էր:

Մենք այդ ասում ենք ոչ միայն այսօր—ընդունելով այս դրողը զրեւու ժամանակը, և Վաղը միայն այն, ինչ ապագայումն է, այլ արդէն իսկ այն ինչ որ Մուրճի համար տարիներ առաջ ուրացւում էր—այսօր մասամբ խոստովանում է, հրապարակի վրայ՝ մրցակիցների կողմից՝ քոշարկւած ձևերով, ոչ հրապարակի վրայ—աւելի բացարձակ կերպով:

Վատ մամուլի յատկանիշն է—քննադատ չլինել ազնիւ իմաստով, այլ վարաբերան լինել, իր գոյութիւնը ոչնչացած կարծելով որ և բան իր ժամանակին ընդունելով կամ չը հակառակելով: Այդպիսի մամուլը նոյնպէս Դեր է կատարում, բայց միայն բացասական Դեր:

Այդպիսի բացասական Դեր կատարել է նաև ժամանակակից մամուլը Մուրճի վերաբերմամբ: Մենք աւելին կ'ասենք. այդ բացասական Դերի մէջ մամուլի մի մասը հասել է նոյն իսկ մինչև մտքի շանդաժը, շնորհիւ ընթերցող հասարակութեան անպատրաստ գորնելուն՝ շանդաժը իսկոյն պարտել, և մասամբ նոյն իսկ մտքի շանդաժը ջոկել ազնիւ կուրից:

Իր այդ յարկութեամբ բացարձակ ձևով, ամենից շատ փայլել է մի թերթ, որը անցեալում Դրական Դեր կատարելուց յետոյ՝ ներկայումս իր անունը նոյնացրել է մտքի շանդաժի հետ, շատ աւելի հեռու գնալով բարոյական և մտաւոր սայթաքման զառի-

վարով, քան այդ կարելի էր նոյն իսկ գուշակել տանեակ տարի տուած:

Կատարելապէս իրաւացի է այն մեծ պահանջը, որ ընդհանրութիւնը շնուժ է մի հանրածրագիր ամսագրի վրայ: Մեզ պատահել է երբեմն լսել թէ ինչ կարեւոր շէր ունի կատարելու մի ամսագիր մեր կեանքի մէջ, և այդ նոյնը ժամանակ առժամանակ աւելել է նաեւ մամուլի միջոցով, բայց միշտ կեղծ-քննադատի փոփոխ, չար ակնարկներով, կատարելապէս համաձայն հայոց մամուլի այլատեսած ոգուն, որի դէմ մի լուրջ մամուլ ստիպւած է մարտնչել որպէս հասարակաց շարիքի դէմ: Եւ սովորաբար մեր մամուլի օրգաններին մէջ Մուրճի իբրեւ ամսագրի վրայ են գցում այս ու այն գրական երևոյթի պատասխանաւորութիւնը, կամենալով այդպիսով ձնշել մեզ պատասխանաւորութիւնների ծանրութեան ներքոյ:

Եւ մենք չենք խուսափում այդ պատասխանաւորութիւններից: Ընդհակառակը:

Մի ամսագիր, իր շէրերից ազնւագոյնը կատարած սիրտի համարի, ասում ենք մենք, երբ նա խթան է հանդիսացել ժամանակի գրական յառաջդիմութեան, ջանադիր է եղել իր ժամանակի հերթական հարցերին պատասխանելու, ընդհանուր ձգտումներ առաջացնելու, ժամանակակից սերունդը դէպի ազնիւ մտածողութիւնը դրդեցնելու և, վերջապէս, առողջ ընթերցանութեան նիւթ տալու:

Դժւար, չափազանց դժւար է որոշել ամեն մի հասարակական գործոնի շէրը իր ժամանակեայ յառաջդիմութեան ընթացքի մէջ: Բայց մենք մեզ վրայ ենք վերցնում պատասխանաւորութիւնը մեր այս պնդումի համար, որ 1889 թւականից դէս մեր գրական յառաջդիմութեան մէջ կատարւածի համար գլխաւորապէս պարտական ենք Մուրճի գործունէութեանը, այլ և շորան ենք պարտական մի շարք խնդիրների մասին այդ ժամանակամիջոցում մեղմում կատարւած փոփոխութիւնների համար, որքանով որ այդ կարող է կախւած լինել հրապարակական խօսքից, մամուլի մի օրգանից:

Որպէս տեսնում է ընթերցողը՝ մենք չենք հրաժարուում այն պատասխանաւորութիւններից, որ տրամադիր են մեր կեղծ քննա-

Դատները մեզ վրայ բարդելու, այլ և աւելի ևս ընդարձակում ենք այս ամսագրի վրայ ծանրացող պատասխանատուութիւնների շրջանը:

Թէ ինչ էր մեր արեւելեան հայոցս գրականութիւնը 80-ական թւականներին, Դորան մենք պատասխան տւել ենք Դեռ ևս 1897 թւականի յունւարին լինէ՞լէք ժառանգելոյ յօդաւածով: Կրկնել չենք կամենում, բայց միայն յիշեցնում ենք: Ընդհանուր առմամբ տարիներ առաջ մեր ասածի վրայ կարեւոր բան չունինք աւելցնելու, բայց և ոչ մի կէտ՝ ետ առնելու: Կարող կ'իլնէինք մեր ասածները ընդարձակել, բայց էութիւնը չէր փոխւիլ: 80-ական թւականների վերջից Դէս ասպարէզ է եկել գրողների նոր սերունդ, և այնպէս, որ 80-ական թւականները արդէն շատ հեռու բան են թուում: Այո, շատ հեռու: Եթէ անցեալում որոնենք Դորան մի համեմատութիւն, պէտք է վերցնենք 70-ական թւականների շարժումը՝ որը 60-ական թւականները ծածկեց ու գրեթէ մոռացնել տւեց: Աւելին այդ մասին ասելը պատկանում է գրական մի աւելի ընդարձակ տեսութեան, որը մասամբ կարարւել է սոցն այս ամսագրի էջերուս այլ և այլ առիթներով, մասամբ ապագային է թողնւում: Դենք կ'բաւականանա՞նք այսպիսի միայն ընդհանուր գծերով:

Մուրճի հետ հայկական ամսագրութիւնը մտաւ մի նոր շրջան. ամսագիրը իր աւանդական նեղ ծրագիրը փոխեց լայն ծրագրի: Նա աշխատեց ընդգրկել բոլոր այն խնդիրները, որոնք շօշափում են ժողովրդի ոգեկան և նիւթական կեանքը: Հայկական ուսմունքները տեղի տւին հանրակրթականին, մօտենալով եւրոպական ամսագրութեան տիպարին, միշտ, ի հարկէ, աչքի առջև ունենալով այն ազգն ու հասարակութիւնը, որի համար նշանակաւ է ամսագիրը: Նորա մէջ տեղ գտան և հրապարակախօսութիւնը, և գեղեցիկ Դպրութիւնը, և հանրագիտականը, և փնտրեցական ու սոցիալական խնդիրները, և գրական քննադատութիւնը և լեզւական խնդիրները, և գաւառական կեանքի ուսումնասիրութիւնը, և ընթացիկ հասարակական ներքին հարցերի ու արտաքին քաղաքական կեանքի տեսութիւնները: Այսքան լայն ծրագիր իրագործելու համար հարկաւոր էր ժամանակիս սերնդի արժանաւոր ոչժերից շատերի աջակցութիւնը. և կարող ենք ներքին գոհունակութեան

զգացմունքով վկայել, որ այդ աշակցութիւնը մենք գտել ենք, և ինչ կատարւած է—մի ամբողջ սերնդի ձեռնարկութեամբ է կատարւած: Այս ժամանակամիջոցում վերակազմեց հայոց բանաստեղծական գրականութիւնը, նոր արժանաւոր ոյժեր հաստատեցին վիպագրութեան մէջ, հիմք ստեղծեց գրական քննադատութեան համար, հիմք դրեց հանրամարտի գիտական գրականութեան և սնտիստական ու սոցիալական խնդիրները մուտք գործեցին հայոց գրականութեան մէջ:

Զի կարելի, սակայն, ասել թէ արտաքին հանգամանքները եկած ինին նպաստելու 90-ական թւականների գրական շարժման: Ընդհակառակը: Ամենքին յայտնի խոշոր պատմական իրողութիւններ եկան գրական ասպարէզից հեռացնելու ընդհանուրի տրամադրութիւնները, բոլորովին հակառակ այն պատմական հանգամանքներին, որոնք 70-ական թւականներին եկան կենտրոնացնելու բոլորի ջանքերը հայոց մամուլի ու գրականութեան վրայ: Իսկ հայոց ծխական դպրոցները, որոնք բազմանում էին այն տարիները և մի նոր կապ ստեղծում ժողովրդի և մամուլի ու գրականութեան մէջ, 90-ական թւականներին իրենց փակւելով՝ եկան թուլացնելու և ոչ ուժեղացնելու հասարակութեան կապը հայկական տպագրութեան հետ: Եւ հասարակ:

Եւ երբ այդպիսի տարիների համար է վկայւում գրական յաւաքի մոլութիւնը,—արդարեւ, պէտք է խոստովանել, որ մի սերունդի դերը լաւ կատարեց:

Երբ խօսւում է արտաքին հանգամանքների մասին, ներելի է չիշխարակութեան չառնել և այն տնտեսական յեղաշրջումը, որ կատարւեց այս տասնեակ տարիներս Կովկասում և որը եկաւ հայ հասարակութեան կազմը հիմնովին փոխելու: Այս տասնեակ տարիներում է որ արտաշայգուեց Կովկասում ժամանակակից Բաքուն—խոշոր կապիտալիզմի բոլոր ոյժովը: Կատարւելով անասելի արագութեամբ՝ նա նոյնքան արագութեամբ կլանեց մի մեծ մասը երիտասարդութեան՝ մի տեսակ մտաւոր ամաչութիւն սփռելով հայկական գաւառներում, որպէս նաեւ կարեւոր հիւթեր ծծելով այն կենտրոնից, ուր տասնեակ տարիներով կեանքը կազմակերպւել էր միտաւոր գործունէութեան համար: Այս փոփոխութիւնը, որը կարող է նաեւ բարերար հետեանքներ ունենալ, երբ խառնշարժ

հասարակութիւնները նորից կ'կազմակերպւեն, մանաւանդ երբ ար-
դիւնագործութեան նորանոր ձիւղեր կ'հաստատուեն մեր երկրի ու-
րիշ տեղերը, այս սկզբի տասնեակ տարիներս շեռ միայն իրարան-
ցում կարողացաւ գցել և, չամենայն չէպէս, նա կարող էր ոչ թէ
շէպի գրականութիւնը տրամադրել, այլ նորանից շեղել ընդհա-
նուրի ուշքը:

Մեր ակնարկած խոշոր իրողութիւնները, եթէ կարելի է այս-
պէս ասել, գրականախոյս ոյժեր են եղած, որ բացառիկ սաստիկու-
թեամբ գործեցին այս 90-ական թւականներին:

Այդպիսի տարիներում միակ հանրաժողովրդամտագրի կատարե-
լիք շերտ արդարեւ շատ կարեւոր պիտի լինէր: Եւ եթէ Մուրճին հա-
կառակողները շարունակ չիշեցնում են ամսագրի պատասխանատու-
թիւնները, մենք էլ մի կողմից չիշեցնում ենք բացառիկ խոշնդու-
նները, որ գործեցին այս տարիներս, իսկ միւս կողմից հանրութեան
սռաջ ենք դնում կատարւած յառաջդիմութիւնը, որի նկատմամբ
Մուրճը ուշադրի կամ անուշադրի բաց լինելով միշտ առաջնակարգ ներ-
գործութիւն է ունեցած:

Դորա համար հարկաւոր էր որ այս ամսագիրը իր էջերում
տեղաւորած լինէր իր ժամանակի բոլոր գրական լաւ արտագրութե-
աները. այլ հարկաւոր էր միայն որ նա ձիւղութիւն պահ-
պանէր, ժամանակակից մտքի արտայայտիչ լինէր, լաւը գնահատող
և նորա խթանը լինէր, բաց և... նոյն իսկ իր յրական գործու-
նէութիւնով հակառակ մտքերի ոյժը կարելիին չափ չեզոքացնէր ու
անգլխաւ շարձնէր:

Եւ կարծում ենք, որ Մուրճը այդ պաշտօնը սրբութեամբ ու
խղճի մտքով է կատարած. կարծում ենք նաեւ, որ մեր ժամանա-
կում այդ ուրանալու համար պէտք է մտքի շանսաժողով հետ շաշն
հաստատած լինել: Այն թումբը որ գրականութեան զարգացման
շէմ կանգնեցրած էր 80-ական թւականներին, պէտք է պարուէր,
և պարուեց:

Ա. ԱՐԱՍԻԱՆԵԱՆՅ